09/2-Պ21-073

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15»

ք. Երևան <<16>> հուլիսի 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գործադիր տնօրենի ժ/պ Ա. Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Առողջության ապահովագրություն» փաթեթի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 1 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 116760000 (մեկ հարյուր տասնվեց միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **17** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Արամի 3 և 5
ՀՎՀՀ 02593108	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
	Հ/Հ 163008157113
	ՀՎՀՀ 02551341
Է. Կիրակոսյան---------- (ստորագրություն) Կ.Տ	Ա. Հակոբյան---------- (ստորագրություն) Կ.Տ

09/2-Պ21-073

Հավելված Ñ 1
«16» հուլիսի 2021թ. կնքված
«ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների և շախմատի դպրոցների աշխատակիցների համար առողջության ապահովագրության ծառայությունների ձեռքբերման							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	66511120/2	ներկայացված է ստորև	դրամ	116760000	2800	-----	1.2021թ. 2.առողջության ապահո-վագրության վկայագրի տրամադրման օրվանից 365 օր

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ապահովագրական գումարը՝ 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ:

2. Փաթեթը ներառում է հիվանդանոցային պայմաններում սուր, անհետաձգելի և պլանային ստորև նշված բուժօգնությունը, արտահիվանդանոցային, բուժօգնությունը, հիվանդանոցային ձևով իրականացվող այն ախտորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները, որոնց հաջորդում է տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը (այդ թվում՝ հիվանդանոցային ձևով իրականացվող այն ախտորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները, առանց որոնց իրականացման հնարավոր չէր մատուցել տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը), տարեկան մեկանգամյա կանխարգելիչ բուժզննումը:

3. Ապահովագրական ընկերության կողմից անհրաժեշտ է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչություն ներկայացնել եռամսյակային կտրվածքով տեղեկատվություն, առողջության ապահովագրության փաթեթից օգտված շահառուների թվաքանակի և փոխհատուցված գումարի վերաբերյալ:

II. ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

4. Հիվանդանոցային բուժօգնությունը ներառում է՝

1) թերապևտիկ բուժում պահանջող հիվանդությունները.

2) վիրաբուժական բուժում պահանջող հիվանդությունները, այդ թվում՝

ա. նյարդավիրաբուժական, այդ թվում՝ գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժում (ներառյալ միկրոկաթետերի, միկրոպարույրի կամ օնիքսի արժեքը),
բ. սրտի վիրահատական և ներանոթային միջամտությունների իրականացում (ընդ որում, կորոնար անոթների ստենտավորման փոխհատուցումը ներառում է դեղապատ արժեքը), այդ թվում՝ սրտի փականների պրոթեզավորում, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիա.
3)վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) վիրահատական և ոչ վիրահատական բուժումը.
4)էլեկտրահարությունների, այրվածքների և ցրտահարությունների վիրահատական և ոչ վիրահատական բուժումը:
5. Հատուցման ենթակա են՝
1) բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը, այդ թվում՝ հիվանդին հիվանդասենյակով ապահովումը, մասնագիտացված կոնսուլտացիաները, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների անցկացումը, վիրահատական և կոնսերվատիվ բուժումը, վիրահատական և ֆիքսող միջոցները, բուժական միջամտությունները, անհրաժեշտ դեղերով ապահովումը, աշխատակազմի աշխատանքի վարձատրությունը, կոմունալ և տնտեսական ծախսերը.
2) հիվանդանոցային ձևով իրականացվող այն հետազոտությունները, որոնց հաջորդում է տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը (այդ թվում՝ հիվանդանոցային ձևով իրականացվող այն ախտորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները, առանց որոնց իրականացման հնարավոր չէր մատուցել տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը).
3) չարորակ նորագոյացությունների ճառագայթային բուժումը, ընդ որում, հեռահար ճառագայթային բուժումը՝ տարեկան ոչ ավելի, քան 35 սեանսը, ներխոռոչային ճառագայթային բուժումը՝ տարեկան ոչ ավելի, քան 10 սեանսը.
4) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված վերակենդանացման միջոցառումներ և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկում ընդգրկված հիվանդությունների և վիճակների բուժումը: Ընդ որում՝ վերակենդանացման բաժանմունքներում նշված հիվանդությունների և վիճակների բուժման փոխհատուցումն իրականացվում է ոչ ավելի, քան 10 օրվա համար:
6. Հատուցման ենթակա չեն՝
1) հիվանդանոցներում հատկացվող սննդի, առանձնահատուկ հարմարավետ հիվանդասենյակների և անհատական խնամքի համար սահմանված վճարները.
2) անհաղթահարելի ուժի՝ ֆորս-մաժորի (միջուկային պայթյուն, ճառագայթային, ռադիոակտիվ կամ քիմիական վարակ, ռազմական գործողություններ, քաղաքացիական պատերազմ, հասարակական հուզումներ) հետևանքով առաջացած հիվանդությունները:
7. Առողջության ապահովագրության փաթեթի շրջանակներում բոլոր հատուցումներն իրականացվում են ապահովագրական ընկերությունների կողմից բուժհաստատություններին վճարումներ իրականացնելով, իսկ առողջության ապահովագրության պայմանագրով սահմանված դեպքերում՝ ապահովադիրներին (ապահովագրված անձանց)՝ իրենց կողմից արդեն իսկ իրականացրած վճարումների գծով: Հատուցման ենթակա դեպքերի համար չի թույլատրվում ապահովադրից (ապահովագրված անձից) գանձել կամ պահանջել որևէ վճար՝ բացառությամբ ապահովագրական գումարի ամբողջական սպառումից հետո առաջացող պարտավորության դեպքերի կամ ապահովադրի (ապահովագրված անձի) կողմից հատուցվող դեպքի բազային երաշխավորված պայմաններից ավելի պահանջներ ներկայացնելու դեպքում (օրինակ՝ պահանջել ավելի թանկարժեք դեղով կամ թանկարժեք սարքավորումով բուժում, քան հիմնականում կիրառվում է նման դեպքերում)՝ այդ տարբերության մասով:

III. ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

8. Արտահիվանդանոցային բուժօգնությունը ներառում է՝
1) Բժիշկ մասնագետների խորհրդատվությունները.
2)Արտահիվանդոնացային լաբորատոր-ախտորոշիչ բոլոր տեսակի հետազոտությունները.
ա. բիոքիմիական,
բ. հյուսվածքաբանական (հիստոլոգիական),
գ. հորմոնալ,

դ. իմունոլոգիական,
ե. միկրոբիոլոգիական,
զ. ընդհանուր կլինիկական հետազոտություններ,
է. ցիտոլոգիական (բջջաբանական) հետազոտություններ,
9.Արտահիվանդանոցային գործիքային հետազոտությունների բոլոր տեսակները.
ա. ռենտգենոլոգիական,
բ. ուլտրաձայնային,
գ. էնդոսկոպիկ,
դ. մամոգրաֆիա,
ե. անգիոգրաֆիա,
զ. դուպլեքս,
է. էլեկտրոմիոգրաֆիա,
ը.նեյրոֆիզիոլոգիական հետազոտություններ,
թ. համակարգչային տոմոգրաֆիա,
ժ. հոլտեր մոնիտորինգ,
ժա. էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություն,
ժբ. մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա
10.Արտահիվանդանոցային վիրահատական մանիպուլացիաներ և կոնսերվատիվ բուժում.
ա. գինեկոլոգիական հիվանդություններ,
բ. ուրոլոգիական հիվանդություններ,
գ. քկա համակարգի հիվանդություններ,
դ. ակնաբուժական հիվանդություններ,
ե. վնասվացքաբանություն,
զ. մաշկային հիվանդություններ,
է. էնդոկրին հիվանդություններ,
ը. սրտաբանություն,
թ. նյարդաբանություն
ժա. այրվածքներ, ցրտահարություններ, էլեկտրահարություններ
ժբ. ինֆեկցիոն հիվանդություններ
ժգ. սուր թունավորումներ
11.Դեղորայքի, բժշկական պարագաների և վիրակապական նյութերի ծախսերի հատուցումը
12.Արտահիվանդանոցային բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումները:

IV. ԱԽՏՈՐՈՇԻՉ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԵՎ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Հատուցման ենթակա են սուր, անհետաձգելի և պլանային դեպքերում ախտորոշման և բուժման ընթացքի վերահսկման նպատակով հիվանդանոցային բուժման համար իրականացվող լաբորատոր և գործիքային հետևյալ հետազոտությունները՝

1) լաբորատոր՝

ա. կլինիկական,
բ. բիոքիմիական,
գ. իմունաբանական,
դ. մանրէաբանական,
ե. հորմոնալ,
զ. գենետիկական,
է. պաթոհիստոլոգիական,
ը. PCR,
թ. այլ լաբորատոր հետազոտություններ.
2) գործիքային՝
ա. ռենտգենաբանական (ներառյալ կոնտրաստային նյութի արժեքը),
բ. համակարգչային տոմոգրաֆիա (ներառյալ կոնտրաստային նյութի արժեքը),
գ. մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա (ներառյալ կոնտրաստային նյութի արժեքը),
դ. անգիոգրաֆիա, այդ թվում՝ կորոնարոգրաֆիա,
ե. ուլտրաձայնային հետազոտություններ,
զ. ռադիոիզոտոպային հետազոտություններ,
է.ֆունկցիոնալ հետազոտում (ԷՍԳ, էլեկտրամիոգրաֆիա, սպիրոգրաֆիա, դոպլեր, դուպլեքս հետազոտություններ և այլն),
ը.էնդոսկոպիկ հետազոտություններ (էզոֆագոգաստրոդուոդեն-ոսկոպիա, կոլոնոսկոպիա, ցիստոսկոպիա, բրոնխոսկոպիա և այլն),
թ.նեյրոֆիզիոլոգիական հետազոտություններ (ԷԷԳ, ԷխոԷԳ, աուդիոմետրիա և այլն),
ժ. դիագնոստիկ լապարատոմիա:

Ⅴ. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺՁՆՆՈՒՄԸ

15.Կանխարգելիչ ընդհանուր բժշկական հետազոտություն՝
1) Արյան ընդհանուր հետազոտություն լեյկոֆորմուլայով,
2) Արյան բիոքիմիական հետազոտություն /գլյուկոզա, պրոթրոմբինային ինդեքս, խոլեստերին/,
3) Մեզի ընդհանուր հետազոտություն,
4) Գործիքային քննություն (ԷՍԳ),
5) Ռենտգեն հետազոտություն. կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն՝ պարտադիր, այլ օրգան-համակարգերի ռենտգեն հետազոտություն՝ համապատասխան բժիշկ-մասնագետի ցուցման դեպքում,
6) Որովայնի և փոքր կոնքի ուլտրաձայնային հետազոտություններ,
7) Ակնաբույժի խորհրդատվություն, տեսողության ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ ակնոցի դուրսգրում:
8) Թերապևտի խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում թերապևտի ուղեգրմամբ նեղ մասնագետների խորհրդատվություններ,
9) Կորոնարոգրաֆիա՝ համապատասխան բժիշկ-մասնագետի ցուցման դեպքում,
10) Վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն,
11)Ներզատաբանի խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում վերջինիս ցուցմամբ վահանաձև գեղձի հորմոնալ հետազոտություն:
12) Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, մինչև 35 տարեկան կանաց բժշկի ցուցմամբ, իսկ 35 և ավել տարիքի կանաց՝ առանց ցուցման /պարտադիր/,

13) Պրոստատ-սպեցիֆիկ անտիգենը (prostate specific antigene, PSA) արյան հետազոտություն՝ 40 տարեկան և ավել տղամարդկանց համար:

Կանխարգելիչ բժշկական քննությունները պետք է իրականացվեն տարեկան մեկ անգամ՝ փաթեթի շահառուի կողմից ընտրված հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում և ենթակա են պարտադիր փոխհատուցման ապահովագրողի կողմից՝ շահառուի կողմից համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում: Ապահովագրական ընկերությունը իրավունք չունի ապահովադիրներին (ապահովագրված անձանց)՝ պարտադրելու օգտվել ապահովագրական ընկերության կողմից նախընտրելի հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունից:

VI. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Առողջության ապահովագրական փաթեթով որպես ապահովագրական պատահար չեն դիտվում և փոխհատուցման ենթակա չեն՝

1) առանց բժշկական ցուցումների իրականացվող բժշկական ծառայությունները, դեղորայքը, հոսպիտալացումը.

2) հետևյալ հիվանդությունները և իրավիճակները՝

ա. տուբերկուլյոզ,

բ. հոգեկան հիվանդությունները, դրանց հետևանքները և սահմանային վիճակները (նևրոզ, փսիխոթերապիա, փսիխոզ և այլն), հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս,

գ. առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ,

դ. նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննություն,

ե. ուռուցքաբանական հիվանդությունների քիմիաթերապևտիկ բուժում,

զ. վերականգնողական բուժօգնություն,

է. երիկամային խրոնիկ անբավարարության կապակցությամբ կատարվող հեմոդիալիզ,

ը. մանկաբարձական բուժօգնություն.

3) ցանկացած կանխարգելիչ և կազդուրիչ միջոցառումներ, այդ թվում՝ իմունականխարգելիչ պատվաստումներ.

4) բնածին անոմալիաները և զարգացման արատները կամ անատոմիական առանձնահատկությունները, ժառանգական և գենետիկ հիվանդությունները՝ պարբերական հիվանդությունը, էպիլեպսիան, դեֆորմացիաները և քրոմոսոմային խանգարումները, մանկական ուղեղային պարալիչը.

5)քրոնիկ հիվանդությունները, որոնք պահանջում են մշտական, պահպանողական բուժում և դինամիկ հսկողություն Սույն կետում նշված բացառությունները չեն վերաբերում՝

ա. ոչ հասուն բարդացած և հասուն /գերհասուն կամ ուռճացող/ կատարակտաների վիրահատություններին,

բ. ապահովագրության ժամկետի ընթացքում դրանց անհետաձգելի (կյանքին սպառնացող) սրացումներին և բարդություններին:

6) շաքարային դիաբետ և նրա մշտական, պահպանողական բուժում պահանջող բարդությունները.

7) թոքերի քրոնիկ ոչ յուրահատուկ հիվանդությունները՝ թոքերի էմֆիզեմա, պնևմոսկլերոզ.

8) ողնաշարի միջողնային սկավառակների ախտահարումները, դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխությունները, օստեոխոնդրոզը.

9) աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդությունները.

10) լյարդային անբավարարությունը.

11) քրոնիկական վիրուսակրությունը (այդ թվում՝ հեպատիտ B, C, D, E, F), բացիլակրությունը, պարազիտակրությունը.

12) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը.

13) ճառագայթային հիվանդությունները.

14) քաշի և խոսքի շտկումը, սեռի վիրաբուժական փոփոխումը.

15) կոսմետիկ, էսթետիկ կամ ապահովագրված անձի հոգեբանական վիճակը բարելավելու նպատակներով իրականացվող վիրահատությունները՝ բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացածները.

16) մաշկի հիվանդության կապակցությամբ (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ և խալեր, կանդիլոմաներ) և դրանց բարդացումների հետ կապված՝ իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատությունները.

17) քթի միջնապատի դեֆորմացիաների և դրանց բարդությունների շտկումը, դրանց բարդացումները՝ բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում դժբախտ պատահարի հետևանքով առաջացած կամ սուր շնչառական անբավարարություն առաջացնող դեպքերը.

18) աչքի էքսիմեր լազերային վիրահատությունները.

19) ոչ ավանդական, այլընտրանքային (ոչ գիտական) բուժման ու ախտորոշման մեթոդները, փորձարարական կամ հետազոտական մեթոդներով բուժումը, կազդուրման ավանդական համակարգերը, հեռաբժշկության հետ կապված ծառայությունները.

20) սանատոր-առողջարանային բուժումը.

21) վերականգնողական (ռեաբիլիտացիոն) բուժումը, ֆիզիոթերապևտիկ միջոցառումները և բուժումը.

22) ներարգանդային սերմնավորումը և էքստրակորպորալ բեղմնավորումը.

23) ռեպրոդուկտիվ (վերարտադրողական) ֆունկցիայի և էրեկտիլ դիսֆունկցիայի (իմպոտենցիա) հետ կապված հետազոտությունները և բուժումը, հակաբեղմնավորիչ կոնսերվատիվ միջամտությունները, այդ թվում՝ ՆԱՊ-ի տեղադրումը և հեռացումը, դիսմենորեան, հակաբեղմնավորիչ միջոցները.

24) վերջույթների և դրանց առանձին սեգմենտների պրոթեզավորումը, էնդոպրոթեզավորումը՝ բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքի.

25) պրոթեզները, էնդոպրոթեզները, բժշկական սարքավորումները, իմպլանտները, տեսողական և լսողական սարքերը, ինչպես նաև այլ կարգավորիչ բժշկական հարմարանքներ, հաշմանդամային սայլակները, օրթոպեդիկ սարքերը, կենսաակտիվ հավելումները, կանխարգելիչ վիտամինաթերապիան, կոսմետիկ պարագաները: Սույն կետում նշված բացառությունները չեն վերաբերում՝

ա. սրտի վիրահատական միջամտություններին, այդ թվում՝ սրտի փականների պրոթեզներին, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտներին և այլն,

բ. ներանոթային միջամտություններին, այդ թվում՝ գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժման ժամանակ օգտագործվող միկրոկաթետերներ, միկրոպարույրներ, օնիքս և այլն.

26) ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը.

27) ալկոհոլիզմը, թմրամոլությունը, թունամոլությունը և դրանց հետևանքով առաջացած հիվանդությունները.

28) ապահովագրված անձի կողմից հակաօրինական գործողությունների արդյունքում առաջացած վնասվածքները և հիվանդությունները:

VII. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ՊԱՏՇԱՃ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծառայությունների ոչ պատշաճ մատուցման դեպքում շահառուն իր հիմնավորված փաստարկներն է ներկայացնում Երևանի քաղաքապետարան, որից հետո վերջինս մեկ օրյա ժամկետում գրավոր ծանուցում է գնման պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությանը՝ թերությունները վերացնելու պահանջով, դրա համար սահմանելով հստակ ժամկետ: Ապահովագրական ընկերությունը սահմանված ժամկետում շահառուին պատշաճ ծառայություններ մատուցելու ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում, Երևանի քաղաքապետարանը ձեռնարկում է միջոցներ շահառուի համար սույն կարգով նախատեսված պատշաճ բուժօգնություն ապահովելու ուղղությամբ, որոնց ծախսերի ամբողջական հատուցումը պարտավոր է իրականացնել գնման պայմանագիր կնքած անձը, եթե դեպքը վերջինիս կողմից ճանաչվել է որպես ապահովագրական պատահար եւ ենթակա է հատուցման:

VIII. ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

Առողջության ապահովագրության շահառուներ են համարվում Երևանի քաղաքապետարանի, Երևան ենթակայության գրադարանների, թատրոնների և թանգարանների հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողները, ինչպես նաև «Գերատեսչական շենքերի պահպանման և

շահագործման» փակ բաժնետիրական ընկերության, «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության, կառավարման տեխնոլոգիաների, Երևան հիմնադրամի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի աշխատողներ մասնավորապես՝

-Երևանի քաղաքապետարան (ներառյալ Երևանի վարչական շրջանները, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինները),

-«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ,

-«Երևանտրանս» ՓԲԸ,

-«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ,

-«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ,

-Երևան հիմնադրամ,

-գրադարաններ,

-թանգարաններ,

-թատրոններ:

Ընդամենը – մինչև 2800 մարդ:

IX. ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Պայմանագրի կնքման օրվանից ընկերության կողմից 10 օրացուցային օրվա ընթացքում շահառուներին տրամադրվում է առողջության ապահովագրության վկայագիր (որը ենթակա է սպասարկման ՀՀ տարածքի բոլոր բժշկական հաստատություններում), որն ուժի մեջ է մտնում տրամադրման օրը և գործում է 365 օր:

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ
ք. Երևան, Արամի 3 և 5
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163008157113
ՀՎՀՀ 02551341

Ա. Հակոբյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

09/2-Պ21-073

Հավելված N 2
«16» հուլիսի 2021թ. կնքված
«ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ	Գնման առարկայի անվանումը /առողջապահության ապահովագրություն/	Ստացողի հասցեն և բանկային վավերապայմանները	Ֆինանսավորման գումարը Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ
1	Երևանի քաղաքապետարան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900012005139	40438575	40438575	40438575	53918100	53918100	53918100	53918100
2	Երևանի Աջափնյակ վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052000016	4612020	4612020	4612020	6588600	6588600	6588600	6588600
3	Երևանի Արաբկիր վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032000128	4757970	4757970	4757970	6797100	6797100	6797100	6797100
4	Երևանի Ավան վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032000052	2532024	2532024	2532024	3836400	3836400	3836400	3836400

5	Երևանի Դավթաշեն վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052000032	2314350	2314350	2314350	3085800	3085800	3085800	3085800
6	Երևանի Էրեբունի վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900022018031	4057410	4057410	4057410	5796300	5796300	5796300	5796300
7	Երևանի Կենտրոն վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900012005170	6098625	6098625	6098625	8131500	8131500	8131500	8131500
8	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052000065	4441050	4441050	4441050	5921400	5921400	5921400	5921400
9	Երևանի Նոր Նորք վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032000037	5129100	5129100	5129100	6838800	6838800	6838800	6838800
10	Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900012005204	1547070	1547070	1547070	2210100	2210100	2210100	2210100
11	Երևանի Նուբարաշեն վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900022018106	992460	992460	992460	1417800	1417800	1417800	1417800

12	Երևանի Շենգավիթ վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900022018072	5304240	5304240	5304240	6630300	6630300	6630300	6630300
13	Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900032000078	3911460	3911460	3911460	.	5587800	5587800	5587800

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ
ք. Երևան, Արամի 3 և 5
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163008157113
ՀՎՀՀ 02551341

Ա. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ

09/2-Պ21-073

Հավելված 3
«16» հուլիսի 2021թ. կնքված
«ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

09/2-Պ21-073

Հավելված 3.1
«16» հուլիսի 2021թ. կնքված
«ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0002,
Ամիրյան փող. 23/1
Հեռ.՝ +37410 510 910, 86 86
Ֆաքս՝ +37410 538 904
Էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Head office
23/1 Amiryan str., 0002, Yerevan
Republic of Armenia
Tel.: +37410 510 910, 86 86
Fax: +37410 538 904
E-mail: bank@aeb.am
www.aeb.am

N 14.3-03/46 «14» 07 2021թ.

ԵՐԱՇԽԻՔ

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 35,028,000 (երեսունհինգ միլիոն քսանութ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է 2021թ. հուլիսի 14-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 26-ը ներառյալ:
   Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:
   Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) N «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն՝ Արամ Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ՝ Էդգար Պողոսյան

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0002,
Ամիրյան փող. 23/1
Հեռ.՝ +37410 510 910, 86 86
Ֆաքս՝ +37410 538 904
էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Head office
23/1 Amiryan str., 0002, Yerevan
Republic of Armenia
Tel.: +37410 510 910, 86 86
Fax: +37410 538 904
E-mail: bank@aeb.am
www.aeb.am

N 14.3-03/47 «14» 07 2021թ.

ԵՐԱՇԽԻՔ

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ միջև կնքվելիք N «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 11,676,000 (տասնմեկ միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է 2021թ. հուլիսի 14-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 26-ը ներառյալ:
   Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:
   Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) N «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/15» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն՝ Արամ Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ՝ Միքայել Պողոսյան